

Արձանագրություն թիվ 4

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2022թ հոկտեմբերի 28-ին

Օրակարգը`

1. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահի հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Քիմիայի ֆակուլտետի դեկան-Տ.Վ.Ղոչիկյան

Հարգելի գործընկերներ այսօրվա գիտխորհրդի օրակարգը բավականին թեթև է: Գիտխորհրդի 16 անդամներից ներկա են 13-ը: Ուսանողների ցանկը դեռևս համալրված չէ և ունենք մեկ հարգելի բացակա: Լսենք Քիմիայի ֆակուլտետի մեթոդ խորհրդի նախագահ Կ.Ռ.Գրիգորյանի հավետվությունը 2021/2022 թ տարեկան կատարած աշխատանքների մասին:

Կ.Ռ.Գրիգորյանի հաշվետվությունը կցվում է:

Ելույթ ունեցողին հարցեր ուղղեցին

1. Ռ.Պ Մխիթարյան- Ինչ ընթացքում է քիմիա առարկայի դասավանդման որակի բարձրացման համար կատարվող աշխատանքները:

-Կ.Գրիգորյան , - ամբիոններում հիմնականում կատարվել են լաբորատոր աշխատանքների ծրագրերի փոփոխություն, որը մեծացնում է ուսանողների գիտելիքների` տեսական և փորձարարական հմտությունները: Փոփոխություններ են կատարվել օրգանական քիմիայի ամբիոնում: Այս ամբիոնում պահպանելով որակական ֆունկցիոնալ անալիզի դասական մեթոդները ավելացրել են արդիական փորձերի շարք:

2. Ռ.Պ.Մխիթարյան – Ինչ արձագանք է ստացել, քիմիա առարկայից, ուսուցիչների վերապատրաստման գործընթացի վերաբերյալ ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի կարծիքը:

- Կ.Ռ.Գրիգորյան – Իրականում ոչ մի արձագանք չկա, սակայն այն փաստը, որ մեզ չեն ուղարկել անցած ատեստացիայի օրինակ նմուշը. Խոսում է բացասական արձագանքի մասին: Ըստ էության այդ թեստը լուծել էին մեր ֆակուլտետի 5 դասախոս որոնք միանգամից ֆիքսել էին սխալ խնդիրներ, թեսթային սխալ պատասխաններ: Մենք այդ մասին տեղեկացրել էին համապատասխան նամակը և մեր կարծիքը այդ մասին:

3. Ա,Նիգարյան- Ինչ վիճակում է գտնվում կենցաղային քիմիա դասագրքի հարցը: Քանի որ լինելով ոչ արդիական դեռևս դասավանդվում է այդ գրքով:

Կ.Ռ.Գրիգորյան – Գրքի հետ կանչման գործընթացը բավականին լուրջ է, այդ հարցը պետք է սկսվի գրադարանից և ունի որոշակի ընթացակարգ: Եվ կարևորը պետք է կարճ ժամանակահատվածում իրականացվի նոր դասակարգի կամ ավտերնատիվ դասագրքի ընտրության հարցը:

2. Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյան  
-Հարգելի գործընկերներ ընթացիկ հարցերը մի քանիսն են

Ա/ - Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դոցենտներ Գ.Պետրոսյանի, Ռ. Աղամյանի և Ա.Մարտիրոսյանի “Կոմպլեքս միացություններ” դասագրքի տպագրության հարցը:

Խորհրդի նախագահ պրոֆեսոր Տ. Վ. Ղուչիկյանը նշեց, որ “Կոմպլեքս միացություններ” դասագրքը ենթարկվել է ինչպես ներամբիոնային, այնպես էլ արտաքին գրախոսման: Երկրորդ փուլի գրախոսը (ՀՀ ԳԱԱ Ա.Բ.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի ավագ գիտաշխատող ք.գ.թ., Մ.Վ.Մուսայելյան) նշել է աշխատանքի անհրաժեշտությունը ուսանողների, ասպիրանտների, ուսուցիչների, դասախոսների և ընդհանրապես անօրգանական

քիմիայով զբաղվողների համար: Ներամբիոնային և արտաքին գրախոսները դասագիրքը երաշխավորել են տպագրության:

Որոշեցին - Հաշվի առնելով Գ.Պետրոսյանի, Ռ. Ադամյանի և Ա.Մարտիրոսյանի “Կոմպլեքս միացություններ” դասագրքի անհրաժեշտությունը ուսումնական գործընթացի համար՝ քիմիայի ֆակուլտետի գիտխորհուրդը (միաձայն քվեարկության արդյունքում) որոշեց երաշխավորել տպագրության և դիմել ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը՝ թույլատրելու տպագրել վերոհիշյալ աշխատանքը, որպես դասագիրք:

Բ/ Երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ-2023: Այս մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի պրոֆեսոր Կ.Ռ.Գրիգորյանը և Էկոլոգիական քիմիայի կենտրոնի պրոֆեսոր Ս.Ներսիսյանը: Ծանոթանալով աշխատանքների անոտացիային Քիմիայի ֆակուլտետը երաշխավորեց Վերոհիշյալ պրոֆեսորներին շարունակել գործընթացը:

Գիտխորհրդի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղուչիկյան

Գիտխորհրդի քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան